

Դ Ա Ր Դ

(Նուէր Ա. Ա-ին)

Ա՛յ իմ ախպէր, գըրչի ախպէր,
Գըրչիդ դարդին վերջ չը կայ.
Ա՛խ, երբ կ'անցնեն էս մութ ամպեր...
Ա՛խ, երբ արեւօր կը գայ...

Վերն ու հեռուն—սեին տալիս,
Մեռանք սե օր քաշելով.
Էդ սե օրն ես դու էլ լալիս,
Կեանք ու գըրիչ մաշելով:

Մարդ քու ցաւին չի դիմանում,
Յաւըդ մե՛ծ է, սարի պէս...
Արտասո՛ւնք է աչքից քամում,
Սըրտին պառկում, քարի պէս...

Եթիմ ազգի եթիմ որդի՛
Սրտումդ հազար-մի երազ...
Աշուղ դառել էրուած սըրտի,
Զեռք ես առել դարդի՛ն սաղ...

Ու երգում ես, ու էրում ես,
Ոնց խեղճ բըլբուլ սըգաւոր,
Որ չի տեսնում վարդի երես,
Լացով լըցնում սար ու ձոր:

Դո՛ւ էլ կարօտ կեանքի վարդին,
 կեանքի գարնան, արևին,
 Քեզ տուել ես մեր ծով-դարդին,
 էս անգարուն օրերին...

Այ իմ ախպէր, գըրչի ախպէր,
 Գըրչիդ դարդին ես ղուրբան.
 Առաջ գընա յուսով, համբեր—
 Աստուած օրհնի՛ր քու ճամբան:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ